**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

---

**«01» «հուլիս» 2021 թ** N 88-Ա
**ք. Եղեգնաձոր**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-կետի, 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.2021 թվականի N 700-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշումը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունիսի 24-ի թիվ 82-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից, ըստ մարզի սոցիալապես անապահով բնակիչների հրատապ և

անհետաձգելի կարիքները բացահայտելու և ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված հիմնավորումների, առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով, որպես սոցիալական աջակցություն, 6 քաղաքացիների հատկացնել 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

7/1/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ